«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Սլոյանին
ՀՀ Արարատի մարզ, գյուղ Մարմարաշեն, 2 փ., տուն 28

ՀԾՀ 04239755

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի **Մ. Սլոյան**,

«Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու), և **«Շամս Գրուպ»** ՍՊԸ-ի միջև 06.04.2022թ կնքվել է սենդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել (այսուհետ՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված բացասական եզրակացությունը որում որպես անհապատասխանություն նշվել է հետևյալը՝

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից պահանջագրերի համապատասխան ապրանքների մատակարարում չենք ունեցել

Հաշվի առնելով «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ-ի և **«Շամս Գրուպ»** ՍՊԸ-ի միջև 06.04.2022թ կնքված **N ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)-7** պայմանագրի 2.1.7. կետի բ) ենթակետի , գտնում ենք, որ թույլ է տրվել Պայմանագրի պայմանների էական խախտում:

«Շամս Գրուպ» ՍՊ ընկերության կողմից չեն մատակարարվել ապրանքներ, խախտելով Պայմանագրի 2,4 կետը

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում ենք, որ «Շամս Գրուպ»_ՍՊ ընկերության կողմից թույլ է տրվել «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ-ի և «Շամս Գրուպ»_ՍՊԸ-ի միջև 06.04.2022թվականին կնքված **N ԱՄՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(2022/2-Ս)-7** պայմանագրի էական պայմանների խախտում և պայմանավորված նշվածով ապրանքներ չեն մատակարարվել նույն Պայմանագրի 2.1.7. կետի բ) ենթակետի 2.4.1.; 2.4.2. կետերի դրույթներին համապատասխան Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվում է 09.06.2022թվականից: Միևնույն ժամանակ Պայմանագրի 6.2. կետերի դրույթների համաձայն կիրառվել է 6721 (վեց հազար յոթ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամի չափով տուգանք, որը պարտավոր եք վճարել Պայմանագրում նշված պատվիրատուի բանկային հաշվին 5 աշխատանաքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը տեղեկացվում է, որ «Արամ Մանուկյանի անվան մարգառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ-ը՝

1. 09.06.2022թվականից միակողմանի լուծում է Պայմանագիրը,
2. Պայմանագրի 6.2. կետերի դրույթների համաձայն կիրառվել է 6721 (վեց հազար յոթ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամի չափով տուգանք
3. Ձեռնարկում է Պայմանագրից և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ

Տնօրեն՝ **Ա. Պետրոսյան**